Մարդահասակ կարասը փորը կպցրել էր գետնին ու բերանը թնդանոթի փողանցքի մթությամբ ուղղել տերևազուրկ այգուն: Տուն ու ծառ մի բարձրության էին, մարդ ու որթատունկ՝ համարյա մի բարձրության, միայն մի վիթխարի սրբություն էր համբառնում դեմը՝ Արարատը՝ միստիկայի ուսուցիչը՝ Գաղտնիքն իմացողը, հայի համար՝ կենտրոնն աշխարհի:

Թափանցիկ քամին վազելով տաքանում էր կարծես: Լեռը, որքան էլ միստիկ ու հավերժական, մարդկանց էր արտացոլում և արևամարի իր անդրադարձները մաղում հովտի վրա: Տղերքը եկել էին շնորհավորելու Մինասի ծննդյան օրը, և նրա խաղողի այգին թրթռում էր չգիտես ծյան, ծաղկաթերթի, թե լուսնկայի փոշու մեջ:

Առաջին հյուրերը՝ մի բանաստեղծ ու մի նկարիչ, շրջում էին մերկ մարգերի մեջ, շոյում նրա շանը, խոսում գինվորացու տղայի հետ: Մեկն իր գիրքն էր բերել ընծա, մյուսը՝ նկարը:

- Էս կողքի գյուղն է գնացել, - ասաց գինվորացու տղան: - Իր «Ուազով» ա, հեսա կգա:

- Հեռվի՞ց եք եկել: Մի կիչ լավաշ ու պանիր կերեք, մի-մի բաժակ խմեք, Մինասը կերևա, եղբա՛յր ջան, - մոտեցնելով փոքրիկ սեղանն ու նկարչին նայելով՝ ժպտաց կինը:

Նա այնքան սիրուն բացեց սեղանիկն ու շարեց բաժակները, ասես շալն էր բերում, որ գցի սկեսրոջ ուսերին: Ռուսական ելևէջը փոքր-ինչ նրան զատում էր տան շնչառությունից,

բայց հեզություն ու հյուրի հանդեպ հարգալից վերաբերմունքը, կարծես մոր կաթի հետ էր անցել նրան: Բանաստեղծն ու նկարիչը սեղանն օրհնեցին և սպասեցին, օջախն օրհնեցին և սպասեցին, օջախի տիրոջ կենացը խմեցին և սպասեցին:

Հետո մյուս հյուրերը եկան ու միացան: Կին չկար, միակ կինը Լյուդան էր, որ սեղանիկն էր թարմացնում:

Ջերմանում էր այգին: Ինքնաթոր խաղողի օղին, հյուրերի մարմինները վառելով ու կենդանացնելով, մտնում էր քամու մեջ, քամուց՝ ծառ ու որթատունկի, ինչ-որ տեղ խցանված ավշի հոսքի դեմն էր բաց անում, երեկոյի փափկություն էր ստուգում մատներով:

Տան տերն ուշանում էր:

- Բայց ու՞ր պիտի գնացած լինի, - անհանգիստ ասաց մեկը:

- է՛, նրան ի՞նչ, մեկ էլ տեսար՝ դրբա Ղարաբաղ..., - կատակեց մյուսը:

Երրորդն էլ ուզում էր ասել, թե երևի մեզ պես ընկեր-տղերքի է հանդիպել, և մի գյուղում նշում են իր ծննդյան օրը, երբ միաբերան ցնծացին՝ եկա՛վ, Մինասը եկա՛վ...

Անվանակոչն ազդանշան տվեց ձեռնափի ամբողջ ուժով և, լուսամուտից տեսնելով իր այգում բաժակները ձեռքներին իրեն դիմավորող ընկերներին, հուժկու արձագանքեց. «Ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն, ձեր կյանքին մեռնեմ... »: Մոտեցավ, բոլորին գրկեց՝ ճտճտացնելով ոսկորներն ու թողնելով հիացմունքը դեմքներին...

- Լյուդա՞, էս մենք տուն չունե՞նք, որ էս թառլան տղերքին ներս չես տարել, - փաղաքույշ դղրդոցով նայեց դռանը, որ արդեն բացել էր կինն ու պատրաստակամ՝ «հրահանգի» էր սպասում:

- Նե՛րս մտեք, համեցեք, - ասաց Մինասը, - տեղը՝ բոլ, տունը՝ լեն...

Սեղանն առատ էր: Միայն լույս չկար, և մոմեր էին վառել (երկիրը պատերազմի ու շրջափակման մեջ էր):

- Հինգ տարի է՝ երեսդ չենք տեսել, քա՛ջ ախպեր, - ասաց բանաստեղծը:

- Ջենքի եմ եկել. Լյուդան իմացավ ու ինձ «կալանավորեց»:

Սեղանի վերին գլխին ինքն էր բազմել: Աջ կողմում բանաստեղծին ու նկարիչ ընկերոջն էր տեղավորել: Ձախից՝ հարևանն էր, մի գաղթական բաքվեցի, դպրոցի տնօրենը, իր մարտիկներից երկուսը, նախկին մի թմրամոլ, մեկ էլ՝ այգիների պահակը...

Առաջին բաժակը Մինասը բարձրացրեց, և բոլորը հոտնկայս խմեցին զոհված ազատամարտիկների կենացը: Լուռ խմեցին: Անշշուկ: Մեծ լեռն ու լուսինը կարծես ականջ էին դնում: Քամին շունչ էր առնում մի պահ:

Տխրությունից մարդու հոգին երգն է փրկում: Երգը մտնում է հոգու ծալքերի մեջ ու նստում, ոնց որ վերին շրթունքը ներքինի վրա:

... Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդու...

Սեղանակիցները միացան դպրոցի երգող տնօրենին:

Զոհվածներից յուրաքանչյուրն ըստ Ջիվանու էր շողշողում երկնքից: Երկինքն առաքինիների դրախտն է, աշուղ Ջիվանին ապրող-երգող տղերքին ուղեկցում էր դրախտով: Տղերքը Գիլգամեշի նման մեռյալ ընկերոջն էին որոնում, բայց՝ վերևում:

- Ի՞նչ են տեսնում տղերքն այնտեղից..., - մրմնջում էր բանաստեղծը: - Արարատը, մեզ...

Նկարիչը երգում, բայց հայացքը չէր կտրում Մինասի դիմագծերից: «Ու՛ժն էլ այդքան մեղմ լինի: Թիկունքը՝ լայն, թևերը՝ մկանուտ ու երկար, պարանոցը՝ սյան պես: Ծնկներին քառասուն թոռ կնստի...»:

- Ես մե պյան ասեմ, - աշակերտի պես ձեռք բարձրացրեց մարտիկներից մեկը և, թույլտվություն ստանալով սեղանապետից, կանգնեց, - կուզեի, որ ես մեռած ըլեյի, ու Կատուն ապրեր: - Հեծկլտաց...

- Խմի՛, մեռնեմ քեզ, խմի, դու էլ քո բախտն ունես, - ընդմիջեց Մինասը:

Տխրության մի շերտ պիտի անպայման թրթռար սեղանակիցների աչքերում, ինչպես սև ժապավենած գնդի դրոշը:

Կատուին տասն օր առաջ էին հանձնել հողին: Թշնամու

գերեվարության ու մահվան հունձքին թքելով՝ մարտաձորից հանել էին իրենց ընկերոջ դիակն ու բերել հովիտ: Կատու մականունն իրենք կպցրել էին ազերի նշանառուին մութի մեջ հանկարծակիի բերելու և գնդակահարելու համար, թե չէ գողունի մոտեցողի սիրտ չուներ: Հրանոթի արկը պատերազմ գնալուց առաջ պահում էր տան պապական սնդուկի մեջ, ինքն էլ քնում էր այդ սնդուկի վրա, շորերով, ականջը՝ տղերքի կանչին:

-Կատուի պայծառ կենացը,-ասաց բանաստեղծ-սեղանապետն ու ոտքի կանգնեց, -մեր ֆիդայության մի կանաչ ճյուղն էր: Կայծակը ճյուղը կտրեց, բայց քանի՞ կայծակ է ինքն իր ձեռքերով բռնել, - ավարտեց խոսքն ու բաժակը մոտեցրեց շուրթերին՝ դանդաղ, վեհորեն, արմունկը՝ բարձր, խմիչքի համը առանձնահատուկ զգալով:

Հետո պիտի Սինասն ասեր՝ հուշաթաթախ, բառերը հատհատ ընտրած, իրեն մոռանալով ու տղերքի գովքն անելով, կորուստների ափսոսանքի «հեյ վախ»-ով լուսավորած, կյանքումահ ծառի բունն ասես գրկի մեջ...

-Չխմե՛ս, քա՛ջ ախպեր, մի երգ ասեմ,- բանաստեղծ-սեղանապետը Սինասի թախծոտ խոսքը բերում էր հզոր վերջերգի: Շերամի «Ինչպես արծիվ սավառնում ես լեռ ու ժայռը» բամբ որոտաց այդ ապակեպատ պատշգամբում՝ զրնգացնելով իրիկնակապույտ ապակիները: Տղամարդկանց ձայները միացան, ինչպես խմբապարի մեջ թևերն են տարածում ուս ուսի, ու երևում է բերդապատը, ինչպես լեռնագնացներն են շարվում մի պիրկ պարանի վրա, թազբեհի հատիկների պես, ժամանակի հետ պահմտոցի խաղալով... Լյուդան այդ հզորության մեջ արտասվում էր աննկատ:

- Ես չգիտեի, մեռնի՞մ քեզ, որ իմ սիրած երգն էիր ասելու: - Հոգեբավ զարմացավ Սինասը:

- Հա էլի՞, - զարթնեց Կնդըլը, - Սինասի երգն ա:

Բոլորը ծիծաղեցին: Հասկացան իրար:

-Բայց լավ ա, որ խմում ես,- նուրբ ակնարկեց սեղանապետը:

Նա իսկույն հասկացավ ակնարկը.

- Ասեղին էի հագել, ախպե՛ր, հիմի էլ բաժակին ու գրքերին: Գժվա՞մ...

Նրա արթնությունը խնջույքի ծիսական մռայլություն ասես զուլալեց: Կատակելու մի նոր առիթ էին փնտրում տղերքը:

- Էսա, Նապոլեոնի կյանքը կարդացիմ, պրծամ, - գոհ ասաց նախկին թմրամոլը, - կայֆ, - ասես ներարկիչը հենց նոր դուրս էր քաշել երակից:

Քրքջաց նույնիսկ այգիների պահակը, որ նրա գաղտնապահոցները գիտեր:

- Կնդղլ, դու էլ մե պյան չկա՝ կայֆի հետ չկապես, - յուրայինի մեղմությամբ ժպտաց պահակը, - հազիվ պրծել ես, սու՞ս...

- Թող մեր թամադեն ասի. ինքը գրող ա, լավ կիմանա,- ուզեց կարճել Մինասը:

- Իրավացի է Կնդղլը. լավ գիրքն, իրոք, կայֆի նման է. մի երազդ հազար է դարձնում, քեզ ողջ տիեզերքին ես տեր զգում: Չգիտեմ, - կոկորդը մաքրեց սեղանապետը, - թե ընթերցելը չլիներ, վայ թե ես էլ..., - այսպես կատակով էլ ավարտեց նա Կնդղլի «հայտնագործությունը»:

- Այդ «հաճույքները» լավ է չհիշենք,- ասաց դպրոցի տնօրենը:

- Ափսո՞ս, շյատ ափսոս, ես հայերեն կարդալ չեմ գիդում, - մղկտաց գաղթականը: Ես իմ հողն ա... լյավ չեմ կարում է՞ խոսամ:

Կարեկցանքով, ուշադիր, ներողամիտ հայացքով էին նայում գաղթականին սեղանակիցները: Ամեն մեկն ուզում էր, որ նա այդ պահին իր կողքին նստած լիներ, որ ձեռքն ուսով գցեր:

Վերջին բաժակը կեսգիշերին խմեցին, և տղերքը դուրս հորդեցին այգի: Նրանց ետևից ծխախոտի ծուխն էլ դուրս եկավ, ասես շոգեքարշ պոկվեր տեղից:

Ինչպես հանդիպելիս էին գրկախառնվել, այդպես էլ մնաք բարով արեցին:

Տաքացել էր դուրսը: Լուսնից լույսն ընկել էր Մասիսին, Մասիսից՝ ամբողջ հովտի վրա: Ֆոկուսում Մինասի այգին էր, իրիկնապահյտ պատշգամբը, արծաթ շապիկներով ծառերը, քարե պարիսպը և ուրարտական ցմփոր կարասը, որի բերանից չգիտես գինի՞ էր հոսում մարգերի մեջ, թե՞ արյուն: Դա լոկ Քրիստոսը կիմանար, և մեծ լեռը՝ միստիկայի ուսուցիչը,

որի սառույցները փշուր-փշուր եղան, հենց տղերքից ամեն մեկը տուն հասավ՝ մոմի լույսի տակ տեսնելու իր ընտանիքի անդամների տրտում-անուշ երեսները: